ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մանուկյան Հ. Վ. (ՀՊՄՀ, Երևան, Հայաստան)
hmayakmanukyan@gmail.com
Ներկայացման ամս.՝ 30.07.2019
գրախոսման ամս.՝ 02.08.2019
տպագրության ընդունման ամս.՝ 13.09.2019

Արդի հասարակության իրավական գիտակցության բարձրացումը նպաստում է մարդու կյանքի որակի բարելավմանը, միևնույն ժամանակ անձ-անձ, անձ-կազմակերպություն հարաբերություններում տարաբնույթ՝ կենցաղային, ընտանեկան, ադմինիստրատիվ, սահմանադրական և այլ իրավական վեճերի քանակի ավելացմանը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում գտնել քաղաքացիաիրավական վեճերի լուծման նոր մեխանիզմներ և հնարավորություններ, որոնց շարքում կարելի է առանձնացնել մեդիացիան, ինչը մեծ կիրառություն ունի Եվրոպայում, Ամերիկայում: Սակայն ՀՀ-ում, մեդիացիան գտնվում է իր կայացման սկզբնական փուլերում, ինչը պահանջում է բազմակողմանի ուսումնասիրություններ: Տվյալ հետազոտության նպատակն է վերլուծել մեդիատորի գործունեության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև միջնորդության մոդելների մասնագիտական-հոգեբանական ադեկվատ միջոցները:

Հանգուցային բառեր՝ *հաշտարար, մեդիացիա, քաղաքացիաիրավական հարաբերություններ, սոցիալ-հոգեբանական խնդիրներ:*

Մարդու գոյության տարբեր դարաշրջաններում առկա են եղել կոնֆլիկտների լուծման տարբեր տեխնոլոգիաներ և կառուցակարգեր, որոնց թվում կարելի է նշել մեդիացիայի երևույթը: Դեռ անտիկ դարաշրջանում տարբեր ցեղերի և համայնքների միջև ծագած կոնֆլիկտների լուծումը իրականացվում էր միջնորդների օգնությամբ: Ե. Կոժեվնիկովի աշխատությունում նշվում է, որ մեդիացիան լայն տարածում է ունեցել Հին Հունաստանում, տարբեր քաղաք-պետությունների միջև ծագած կոնֆլիկտների լուծման ժամանակ, ինչպես նաև Ճապոնիայում և Հին Չինաստանում: Ընդ որում, Չինաստանում մեդիացիան այսօր էլ կայուն տարածում և կիրառում ունի [2]:

Մեդիացիայի զարգացման ժամանակակից փուլը կապվում է անգլա-սաքսոնյան երկրների հետ, որից հետո այն լայն տարածում ստացավ նաև եվրոպական երկրներում: XX-րդ դարի երկրորդ կեսերին բացվեցին մի շարք կազմակերպություններ, որոնց գործունեության նպատակն էր կոնֆլիկտների հանգուցալուծումը կենցաղային հարթություններում: Հիմնական խնդիրը, որը լուծում էր մեդիացիայի ինստիտուտը ֆինանսական կամ հուզական պատճառներով դատարան չդիմող քաղաքացիների կոնֆլիկտների հանգուցալուծումն էր: Հարվարդի պրոֆեսորներ Ռ. Ֆիշերը և Ու. Յուրին առաջարկեցին մեդիացիայի հարվարդյան հայեցակարգը,

համաձայն որի, կոնֆլիկտների հանգուցալուծման գործընթացում նշանակալի դեր ունեն պահանջմունքների բացահայտումը [2]: Հարկ է նշել, որ այսօր էլ այդ մոտեցումը ունի իր լայն կիրառումը մեդիացիայի ինստիտուտում:

Այսպիսով, նախորդ դարի 70-ական թվականներին ԱՄՆ-ում և 90-ական թվականներին Եվրոպական մի շարք երկրներում գործում էր արդեն կայացած մեդիացիայի ինստիտուտը, որը զբաղվում է քաղաքացիաիրավական բազմաբնույթ հարցերով և օգնում էր դատական համակարգին մի կողմից, մյուս կողմից քաղաքացիներին և կազմակերպություններին ավելորդ ֆինանսական և հուզական բեռնվածությունից ազատվելու հարցում:

Այլ իրավիճակ էր տիրում հետսովետական երկրներում, այդ թվում նաև Հայաստանում:

Այսպես, Օ. Ալլախվերդովան նշում է, որ ՌԴ-ում մեդիացիայի տարրեր իրականացնում էին արհկոմիտեները և պարտիական կառույցները, որոնք զբաղվում էին տարաբնույթ կենցաղային և արտադրական խնդիրներով: Ընդ որում, կոնֆլիկտները միշտ լուծվում էին ի օգուտ կոլեկտիվների, իսկ միջանձնային հարաբերությունների պահպանումը, ինչը մեդիացիայի մեխն է անտեսվում էր: Սակայն 90-ական թվականներին, մասնավոր սեփականության իրավունքների զարգացման հետ մեկտեղ առաջանում են բազմաթիվ խնդիրներ անձի և կազմակերպության միջև, և անհրաժեշտություն է առաջանում կոնֆլիկտների հանգուցալուծման այլընտրանքային տարբերակների որոնումը: Այսժամ ՌԴ-ն դիմում է միջազգային փորձին և ձևավորում մեդիացիայի ինստիտուտը, որը իրականացնում է նաև ուսուցողական տարբեր ծրագրեր մեդիատորների պատրաստման համար [1]: Դրա հետ մեկտեղ հարկ եմ համարում նշել, որ մեդիատորը որպես մասնագիտություն նշվում է միայն Ավստրիայում մասնագիտությունների շտեմարանում: Մնացած բոլոր նշված երկրներում մեդիատորներ կարող են դառնալ ինչպես իրավաբանները, այնպես էլ տնտեսագետները, հոգեբանները, սոցիոլոգները: Ինչպես նշում է Ա. Մոլոտնիկովը «Լավ մեդիատորը պետք է ունենա իրավաբանական գիտելիք, հոգեբանի հմտություններ և դատավորի խոհեմություն»: Ըստ Ա. Մոլոտնիկովի հիմնական գործառույթը, որն իրականացնում է մեդիատորը հակամարտող կողմերին ներգրավել, ընկղմել իրավիճակի մեջ, կատարելով կոնֆլիկտային իրավիճակի մշտադիտարկում ցույց տալ խնդրի սեփական տեսակետը, բայց ոչ մի դեպքում մեդիատորը ինքը որոշում չի կայացնում [3]:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում մեդիացիայի ինստիտուտի զարգացմանը, ապա այն կապվում է վերջին տասնամյակի հետ, ընդ որում առավել շատ զարգացել է մեզ մոտ ֆինանսական հաշտարարության ինստիտուտը, որն իր գործառույթներով ավելի նման է խորհրդատվական և տեղեկատվական գրասենյակի, քան մեդիացիայի ինստիտուտին: Վերջին տարիներին փորձեր արվեցին կայացնելու և զարգացնելու վերոնշյալ ինստիտուտը նույն սկզբունքով, ինչ գործում է ամբողջ աշխարհում: Արդարադատության նախարարության կողմից իրականացվեցին վերապատրաստման դասընթացներ, որի մասնակիցները գործող փաստաբաններ, իրավաբաններ

էին: Սակայն որպես այդպիսին մեդիացիայի ինստիտուտը ՀՀ-ում կարելի է համարել դեռ չկայացած: Սակայն դրա անհրաժեշտությունը և հրատապությունը կասկած չի հարուցում, հաշվի առնելով փոխակերպվող հասարակությունում ծագող բազմաթիվ և բազմաբնույթ խնդիրները և կոնֆլիկտները անձ-անձ, անձ-կազմակերպություն, կազմակերպություն-կազմակերպություն հարաբերություններում մի կողմից, մյուս կողմից դատարան դիմելու և ողջ գործընթացի ֆինանսական մեծ ծախսերը, ինչպես նաև նույնիսկ դրական ելքի ժամանակ, այդ գործընթացի շարունակական լինելը, տևականությունը:

Այսպիսով, մեդիացիայի ինստիտուտը ԱՄՆ-ում, Եվրոպայում, Ռուսաստանում գործող ֆունկցիոնալ մեխանիզմ է, որը թեթևացնում է պետության և քաղաքացու ֆինանսական և հուզական բեռը տարաբնույթ կոնֆլիկտային հարցերի լուծման հետ կապված, այն դեպքում երբ Հայաստանում այն կանգնած է ձևավորման սկզբնական փուլերում և պահանջում է համալիր գիտական մոտեցում մեդիացիայի ինստիտուտի ձևավորման, մեդիատորների ընտրության և կրթության հարցերում:

Մեդիատորների գործառույթների դերի և առանձնահատկությունների վերաբերյալ հետաքրքիր տեսակետեր ներկայացված են Կ. Մուրի գրքում, ով վերլուծում է կոնֆլիկտների հանգուցալուծման տարբեր ռազմավարությունները [8]: Մանրամասն դիտարկված են մեդիատորի երեք դերերը՝ սոցիալական ցանցերի միջնորդների, հեղինակավոր միջնորդների և անկախ միջնորդների: Սոցիալական ցանցերի միջնորդների գործառույթները կապված են երկարատև և ստաբիլ սոցիալական հարաբերությունների պահպանման հետ, քանի որ նրանք տվյալ հանրության հարգարժան անդամներն են: Հեղինակավոր միջնորդների դերը կրում է պաշտոնական բնույթ: Սովորաբար, որպես հեղինակավոր միջնորդներ հանդես են գալիս տարբեր օղակի ղեկավարները, որոնք հավասար ազդեցություն ունեն բոլոր կողմերի վրա: Ինչ վերաբերում է անկախ միջնորդներին, նրանց հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր երկու հակամարտող կողմերի համաձայնությամբ: Անկախ միջնորդի դերը կայանում է նրանում, որ նա պետք է օգնի կողմերին մշակել փոխշահավետ, փոխընդունելի, ինքնակամ որոշումներ: Միջնորդի կարգավիճակի տվյալ մոդելը լայն տարածում է գտել աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում: Դրա մասին են խոսում ինտերնետ տարածությունում հրապարակված առաջարկությունները, ինչպես նաև իրավաբանների, հոգեբանների, խորհրդատուների կողմից առաջարկվող ON-LINE ծառայությունները: Այսպես, օրինակ ՌԴ-ում 1999 թ-ից սկսած հրատարակվում է «Третейский суд» ամսագիրը, որտեղ տպագրվում են մեդիացիայի հիմնախնդրին, ինչպես նաև այդ գործընթացի օրենսդրական ասպեկտներին նվիրված հոդվածներ [9]:

Եվ, չնայած մեդիացիայի հիմնախնդրի կարևորությանը տարբեր հարթությունների կոնֆլիկտների լուծման հարցում գիտական գրականության մեջ սակավաթիվ են աշխատանքները նվիրված մեդիատորի անձնային և մասնագիտական որակներին: Առավել մեծ ուշադրություն է դարձվում մեդիացիայի գործընթացին, հիմնական գործառույթներին, դրա հետևանքներին: Օ. Ալլախվերդովան նշում է, որ կոնֆ-

լիկտաբանության հեղինակները չեն անդրադառնում մեդիատորի անձնային և մասնագիտական որակներին, միայն նշվում է, որ այդ դերը կարող է ստանձնել միայն սովորելու ունակ յուրաքանչյուր մասնագետ [1]:

Սակայն քիչ կարևոր չէ նաև մեդիատորի անձնային և մասնագիտական առանձնահատկությունների դերը մեդիացիայի գործընթացի արդյունավետության ապահովման հարցում: Սույն հիմնախնդրի տեսական վերլուծությանն է նվիրված մեր աշխատանքը:

Օ. Ալլախվերդովայի և նրա կոլեգաների կողմից իրականացվել են հետազոտություններ մեդիատորների անձնային որակների և նրանց գործունեության արդյունավետության կապի բացահայտման նպատակով, սակայն հավաստի կապեր հայտնաբերված չեն, ինչը հնարավոր է պայմանավորված է սխալ որակների ուսումնասիրությամբ [1]: Ա. Մոլոտնիկովը նշում է, որ մեդիատորի համար կարևոր է նրա չեզոքությունը [3]: Գիտագործնական տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մ. Լանգի և Ա. Թեյլորի աշխատանքը, որը նվիրված է արհեստավարժ միջնորդի պատրաստմանը արտիստիզմի զարգացման հիման վրա: Հեղինակները նշում են, որ միջնորդի պատրաստումը գտնվում է միջնորդության գործընթացի սահմաններից դուրս: Սույն գրքում դասավանդողի տեսանկյունից ընդհանուր գծերով վերլուծված է արհեստավարժության նորարարական մոդելը մասնագիտական պրակտիկայում, որը հանդիսանում է ռեֆլեքսիվ պրակտիկայի և ինտերակտիվ գործընթացի կապի և հասկացման արդյունքը: Նկարագրելով դեփական փորձը, հեղինակները անդրադառնում են նաև միջնորդության գործընթացի տեսություններին, սկզբունքներին և միջնորդության ասպարեզում իրական արհեստավարժ մասնագետների պատրաստման նորարարական գաղափարներին [7]:

Միևնույն ժամանակ հետաքրքիր տեսակետ են ներկայացնում ամերիկացի պրոֆեսորները իրենց ուսումնական ձեռնարկում առ այն, որ մեդիացիայի գործընթացում կարևոր դեր է խաղում փաստաբանական և չեզոք գործառույթների հարաբերությունը: Գրքում ներդաշնակ համակցվում են տեսական և հայեցակարգային մոտեցումները տարբեր գործնական հավելվածների հետ: Հեղինակների հիմնական նպատակն էր սովորեցնել մեդիացիայի ուսանողներին ինչպես արդյունավետ ներկայացնել հաճախորդներին այդ գործընթացում: Գրքում դիտարկված են նաև վեճերի կարգավորման արդյունարար միջոցները, ինչպես նաև բանակցությունների վարման առանձին նյութերը [5]: Այս աշխատության վերլուծության արդյունքում, կարելի է եզրակացնել, որ մեդիացիայի գործընթացի արդյունավետության համար կարևոր են ոչ միայն իրավական, այլև հոգեբանական բաղադրիչը, մասնավորապես ճանաչողական խոչընդոտների, հուզական հատկությունների, հաղորդակցման ժամանակ դիտակետի հաստատման խնդիրները:

Հ. Աբրամսոնը դիտարկել է փաստաբանության տարբեր հիմնախնդիրներ հակամարտող կողմերի միջև ծագած վեճերի լուծման գործընթացում: Հեղինակը յուրահատուկ կերպով է դիտարկում է ճգնաժամային տարբերակները վեճերի ընթացքում և ուսումնասիրում քայլ առ քայլ ողջ գործընթացը: Միջնորդության հաջորդա-

կանությունը սկսվում է հաճախորդների խորհրդատվությունից կոնֆլիկտների լուծման ռազմավարությունների տարբերակների ընտրության հետ կապված և ավարտվում սեանսին դիմելու պատրաստմամբ: Նշանակալի տեղ է տրվում անելանելի իրավիճակների հաղթահարման մեթոդների ուսումնառությանը, հույզերի հետ աշխատանքների, ինչպես նաև ֆինանսական խնդիրների հետ կապված վեճերի առանձնահատկությունների ուսումնառությանը: [4]: Այսինքն, մեդիատորի գործունեության արդյունավետության ապահովման անհրաժեշտ պայման է հոգեբանական գիտելիքը, մասնավորապես կոնֆլիկտների, բանակցությունների, ներազդման, հույզերի և անձի հոգեբանության ոլորտներում:

Մեդիացիայի գործընթացում հոգեբանական բաղադրիչի ուսումնասիրությանն են նվիրված ամերիկյան իրավաբանական գիտական դպրոցների ներկայացուցիչների աշխատանքները, որտեղ ներկայացված են հոգեբանական երևույթների լայն սպեկտրը [6]: Դ. Հոֆմանը և Ռ. Վոլմանը իրենց հետազոտության մեջ առանձնացրել են մի առանձին բաժին, որն անվանել են «Մեդիացիա և հոգեթերապիա» (էջ 804), որտեղ ներկայացրել են երեք հիմնական պատճառ, թե ինչու պետք է հաշվի առնել հոգեբանական բաղադրիչը այս գործընթացում՝

- Քանի որ միջնորդությունը կառուցված է ինքնորոշման և տեղեկացված համաձայնության սկզբունքի վրա, միջնորդները պետք է վստահ լինեն, որ կողմերից յուրաքանչյուրը կոմպետենտ է այս գործընթացում մասնակցելու համար,
- երբ կողմերի վարքային ռազմավարությունները դեստրուկտիվ են և տանում են գործընթացի ռեգրեսին, միջնորդը պետք է դիտարկի գործում են արդյո՞ք հոգեբանական գործոններ, և, եթե այո, ինչպես դրանք հեռացնել,
- չնայած նրան, որ մեդիացիան թերապևտիկ գործընթաց չէ, այնուամենայնիվ, այն կարող է ունենալ և թերապևտիկ և հակաթերապևտիկ ազդեցություն: Այլ կերպ ասած, մեդիացիայի գործընթացի մասնակիցները կարող են փնտրել ոչ նյութական շահ, մասնավորապես ներողություններ, մյուս կողմից վարքի հասկացում և այլն [6]:

Ամփոփելով վերոնշյալը, կարելի է ասել, որ մեդիատորի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մի կողմից, իրավիճակային փոփոխականների վերլուծության և համադրության ունակություններով կոնֆլիկտների լուծման միջոցների և նպատակների սահմանման համար, իսկ մյուս կողմից, հակամարտող կողմերի հետ աշխատանքի ռազմավարության և մարտավարության ընտրությունով: Միևնույն ժամանակ, գիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ մեդիատորի մասնագիտական կարևոր հատկությունների շարքում են գտնվում հաղորդակցման հմտությունները կոնտակտի հաստատման և բանակցությունների վարման ողջ ընթացքում, բանակցությունների արդյունքում համաձայնության իրագործելիության կանխատեսման կարողությունները, այսինքն կանխատեսման և վերլուծության հմտությունները, ինչպես նաև ներազդման հմտությունները և սոցիալական զգայունությունը, ճկունությունը, հանդուրժողականությունը: Սակայն, ինչպես արդեն նշել էինք, մեդիացիայի հոգեբանական բաղադրիչի վերաբերյալ գիտական աշխատանքները սակավաթիվ են, իսկ առկա աշխատանքները համա-

կողմանիորեն չեն պարզորոշում այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են օրինակ մեդիատորի անձնային և մասնագիտական կարևոր հատկությունները, կարողությունները և հմտությունները, որոնք անհրաժեշտ են գործունեության բարձր արդյունավետության ապահովման համար, ինչպես նաև այն մասնագետների շրջանակը, ովքեր կարող են մասնագիտական շարունակական կրթության արդյունքում ձեռք բերել պրոֆեսիոնալ մեդիատորի կարգավիճակ:

Այսպիսով, վերոնշյալ հետազոտությունների և գիտագործնական աշխատանքների վերլուծությունը ցույց տվեց, որ մեդիատորների մասնագիտական հմտությունների և կարողությունների, գործառույթների, կարգավիճակի վերաբերյալ հարցերը, ինչպես նաև ռազմավարությունների, մեթոդների և տեխնոլոգիաների ընտրության հարցերը գտնվում են տարբեր գիտակարգերի գիտնականների հետաքրքրությունների շրջանակներում և կրում են սիներգետիկ բնույթ: Չնայած մեդիացիայի նշանակալի դերին և տեղին ժամանակակից հասարակությունում, այսօր էլ դեռ մնում են արդի գիտական և լուսաբանող գրականության հրապարակման հարցերը, ինչպես նաև բարձր որակի մեդիատոր- մասնագետների պատրաստման հիմնահարցերը:

Գրականություն

1. **Аллахвердова О. В.** Конфликты, медиация, психология. В кн.: Медиация: теория, практика, перспективы развития. Сб. материалов Первой всероссийской научно-практической конференции/ Отв. ред. О. П. Вечерина. М.: ФГБУ «ФИМ», 2015. Стр. 17-22 с.
2. **Кожевников Е.А.** Краткий экскурс в историю возникновения института медиации в гражданском праве. //Право и политика. 2012. 12 (156), стр. 2054-2056 www.nbpublish.com
3. **Нечаева Ю. Б., Селищева А. Н.** Медиация. Новый подход к разрешению конфликтов (Дайджест), 2009, Пермь, 120 с.
4. **Abramson H. I.** Mediation Representation: Advocating as Problem Solver, Wolters Kluwer, 2014, 484 p.
5. **Golann D, Folberg J.** Mediation: The Roles of Advocate and Neutral, Wolters Kluwer, 2016, 432p.
6. **Hoffman D. A., Wolman R. N.** The Psychology of Mediation. Cardozo J. Of Conflict Resolution, Vol. 14, pp.759-806
7. **Lang M., Taylor A.** The Making of a Mediator: Developing Artistry in Practice. John Wiley & Sons, 2012, 288p.
8. **Moore C.** The Mediation Process: Practical Strategies for Resolving Conflict, 3rd., San Francisco: Jossey-Bass Publishers, 2004
9. http://arbitrage.spb.ru/jts/archive.html/журнал «Третейский суд»

СОВРЕМЕННЫЕ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ДЕЯТЕЛЬНОСТИ МЕДИАТОРА В ГРАЖДАНСКО-ПРАВОВЫХ ОТНОШЕНИЯХ

Манукян А. В. (АГПУ, Ереван, Армения)

Повышение правосознания в современном обществе, несомненно, будет способствовать повышению качества жизни человека. Однако, одновременно, в межличностных и межгрупповых взаимоотношениях наблюдается увеличение количества бытовых, семейных, административных, конституционных и правовых других видов спора. Поэтому существует необходимость поиска новых механизмов и возможностей для гражданского судопроизводства, в том числе посредничества, которое широко используется в развитых странах Европы и Америки. В Армении медиация находится на ранней стадии своего развития, и это обстоятельство делает необходимым предпринимать научные исследования и всесторонний анализ процесса медиации. Целью настоящего исследования является теоретический анализ социально-психологических особенностей деятельности медиатора и поиска адекватных средств профессионально-психологических схем посредничества.

Ключевые слова. *медиатор, медиация, гражданско-правовые отношения, социально-психологические проблемы.*

MODERN SOCIAL AND PSYCHOLOGICAL PROBLEMS OF MEDIATOR'S ACTIVITY IN LEGAL CIVIL RELATIONS

Manukyan H. V. (ASPU, Yerevan, Armenia)

Raising legal awareness in modern society will undoubtedly contribute to improving the quality of human life. However, at the same time, in interpersonal and intergroup relationships there is an increase in the number of household, family, administrative, constitutional and legal other types of dispute. Therefore, there is a need to find new mechanisms and opportunities for civil litigation, including mediation, which is widely used in the developed countries of Europe and America. In Armenia, mediation is at an early stage of its development, and this circumstance makes it necessary to undertake scientific research and a comprehensive analysis of the process of mediation. The purpose of this study is to analyze the socio-psychological characteristics of the activities of the mediator and the search for adequate means of professional psychological mediation schemes.

Keywords. *Mediator, mediation, civil and law relations, socio-psychological problems.*